

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## Վերաինտեգրման հարցերով ֆորումի

27 մարտի 2018թ.

ք.Երևան

### Մասնակցում էին՝

- Գագիկ Եգանյան** - ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ
- Հայկանուշ Չոբանյան** - ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության արտաքին կապերի բաժնի պետ
- Անդրանիկ Հարությունյան** - Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համանախագահ (ՖՀՀՀ)
- Արփինե Ստեփանյան** - Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի ծրագրերի համակարգող (ՖՀՀՀ)
- Զոյա Ստեփանյան** - ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության ԵՄ բաժնի երկրորդ քարտուղար
- Ամալյա Ենոքյան** - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության աշխատանքային միգրացիայի բաժնի առաջատար մասնագետ
- Կարինե Խոջայան** - Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ
- Արմեն Բադիրյան** - Միգրացիայի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակ

<b>Նաիրա Պետրոսյան</b>	-Հայաստանում Ֆրանսիայի իմիգրացիայի և ինտեգրման գրասենյակի(OFIG) ներկայացուցչության եվրոպական ծրագրերի պատասխանատու
<b>Տաթևիկ Բեժանյան</b>	-«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
<b>Արմինե Եփրեմյան</b>	- «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
<b>Անահիտ Չոբանյան</b>	-Վերաինտեգրման «մեկ պատուհան» ծառայության խորհրդատու

### **Հրավիրված էին, բայց ներկա չէին՝**

<b>Ժորա Սարգսյան</b>	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
<b>Վարդան Մարաշյան</b>	-«Վերադարձ Հայաստան» հիմնադրամի ղեկավար
<b>Կարել Հոֆստրա</b>	-Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ICMPD)

### **Օրակարգ՝**

1. Ողջույնի խոսք – **Գագիկ Եգանյան**
2. Ֆորումի կանոնադրության նախագծի մասին– **Հայկանուշ Չոբանյան**
3. ՖՀՀՀ-ի և ՄՊԾ-ի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի մասին - **Անդրանիկ Հարությունյան**
4. Այլ հարցեր

Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի (այսուհետ՝ ֆորում) առաջին եռամսյակային հանդիպումը տեղի ունեցավ 2018 թվականի մարտի 27-ին, որի հիմնական նպատակն էր Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիներին վերաինտեգրման աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների միջև համագործակցության խորացումը, Հայաստանում վերադարձի ու վերաինտեգրման գործընթացների արդյունավետ իրականացումը:

Հանդիպման սկզբում ՀՀ ՏԿԶՆ ՄՊԾ պետ պրն. Գ. Եգանյանը ողջունեց ֆորումին ներկա գտնվող պետական կառույցների, միջազգային և հասարակական

կազմակերպությունների ներկայացուցիչներին: Կարևորելով ֆորումի ստեղծումը, որը նախատեսված է 2017թ. օգոստոսի 31-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի» 3.1.բ.1. կետով, պրն. Գ. Եգանյանը հանգամանալից անդրադարձավ միջոցառումների ծրագրով նախատեսված այն գերակա ուղղությանը, որն առնչվում է վերադարձող միգրանտների վերաինտեգրմանը, ներկայացրեց ծրագրով նախատեսված խնդիրների շրջանակը, կարևորեց իրականացվելիք գործողությունների շրջանակը, որոնք միտված են լինելու Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիներին ցուցաբերվող վերաինտեգրման աջակցության արդյունավետության բարձրացմանը:

ՄՊԾ արտաքին կապերի բաժնի պետ Հ. Չոբանյանն իր հերթին ներկայացրեց ֆորումի նախագծի կանոնադրությունը, գործունեության ձևաչափն ու հիմնական ուղղությունները: Նաև շնորհակալություն հայտնեց այն կազմակերպություններին, որոնք ներկայացրել են կանոնադրության նախագծի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկները:

Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի (ՖՀՀՀ) հոգաբարձուների խորհրդի համանախագահ պրն. Ա. Հարությունյանն առաջարկեց վերաինտեգրման <<մեկ պատուհան>> ծառայության գործունեության մասին ևս ներառել ֆորումի կանոնադրության նախագծի մեջ: Ելույթի իր խոսքում պրն. Ա. Հարությունյանն անդրադարձավ նաև ՖՀՀՀ-ի և ՄՊԾ-ի միջև վերջերս կնքված փոխըմբռնման հուշագրին, որը կարևոր դերակատարում է ունենալու ֆորումի արդյունավետ գործունեության և վերադարձողների <<մեկ պատուհան>> ծառայության աջակցության ուղղությամբ:

Այնուհետև ակտիվ քննարկումներ ծավալվեցին ինչպես ֆորումի կանոնադրության նախագծի վերաբերյալ առաջարկությունների, այնպես էլ՝ ընդհանուր առմամբ ֆորումի գործունեության վերաբերյալ:

Քննարկվեց ֆորումի անդամ կազմակերպությունների կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերի մասին նկարագրությունների (պրոֆայլների) տրամադրման հաճախականությունը, առաջարկվեց նաև պրոֆայլներում ավելացնել շահառու դառնալու նպատակով ծրագրերին դիմելու չափանիշները, ինչպիսիք են օրինակ՝ միգրանտի տարիքային սահմանափակումը, արտերկրում բնակվելու և ՀՀ վերադարձից հետո ծրագրին դիմելու ժամանակահատվածը:

Քննարկվեցին կազմակերպությունների կողմից հավաքագրվող վիճակագրական ցուցանիշների և շահառուների վերաբերյալ հարցաշարերի ձևաչափերի ընդհանրացման հարցերը:

## Որոշվեց՝

- լրամշակել ֆորումի կանոնադրության նախագիծը՝ ներառելով ներկայացված առաջարկներն ու դիտողություններն, այդ թվում նաև <<մեկ պատուհան>> ծառայության գործունեության վերաբերյալ;
- ֆորումի անդամ կազմակերպություններն (այսուհետ՝ անդամ կազմակերպություններ) իրենց կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերում տեղի ունեցած փոփոխությունների կամ նոր ծրագիր սկսելու դեպքում ներկայացնում են այդ ծրագրերի թարմացված նկարագրությունները (պրոֆայլները);
- ֆորումի հաջորդ աշխատանքային հանդիպման ընթացքում անդամ բոլոր կազմակերպությունները ներկայացնելու են իրենց կողմից իրականացվող ծրագրերը;
- անդամ կազմակերպությունները նաև պարբերաբար ներկայացնում են իրենց ծրագրերի շրջանակներում վերադարձած միջրանտների մասին հաջողված պատմությունները;
- յուրաքանչյուր եռամսյակային հանդիպման ընթացքում անդամ կազմակերպությունները ներկայացնելու են իրենց կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերի վիճակագրությունը: Հաջորդ հանդիպմանը ներկայացվող վիճակագրական տվյալները ժամանակագրական կտրվածքով ընդգրկելու են 2017 թվականը և 2018 թվականի երկրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածը;
- վիճակագրական տվյալների հավաքագրման ձևաչափը ստանդարտացնելու նպատակով անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները տրամադրելու են իրենց կողմից մշակված հարցաշարերը, որոնց միջոցով հարցազրույց է անցկացվում վերադարձած միգրանտի հետ:
- ՀՀ ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալության աշխատանքային միգրացիայի բաժնի ներկայացուցիչը առաջիկա աշխատանքային հանդիպմանը կներկայացնի տեղեկատվություն այն մասին, արդյո՞ք սահմանված է «վերադարձող միգրանտ» հասկացությունը ԶՊԳ կողմից կարգավորվող իրավական ակտերի կամ օրենսդրության շրջանակներում, արդյո՞ք վերջիններս դասվում են

աշխատաշուկայում անմրցունակ անձանց շարքին և զբաղվածության պետական ի՞նչ ծրագրեր կան, որոնցից կարող են օգտվել վերադարձող միգրանտները:

- Ուսումնական և ակադեմիական հաստատությունների հետ համագործակցությունը խորացնելու նպատակով առաջիկայում հանդիպել «Էրազմուս+» ծրագրի գրասենյակի ղեկավարի հետ, որի շնորհիվ ոլորտի մասնագետները, մասնակցելով պարբերաբար կազմակերպվող դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների, մշտապես իրազեկ կլինեն ոլորտին առնչվող հիմնախնդիրներին, կատարվող ուսումնասիրություններին, ինչպես նաև հնարավորություն կունենան կիսելու իրենց լավագույն մասնագիտական փորձը ոլորտի այլ մասնագետների հետ:
- Ֆորումի կանոնադրության և արձանագրության լրամշակման ու ներկայացման վերջանաժամկետը՝ ս.թ. ապրիլի 10:

**Ֆորումի հաջորդ եռամսյակային հանդիպումը տեղի կունենա ս.թ. հունիսին 27-ին:**